# Հատուկ Վճարումներ Կենսաթոշակի

## Բովանդակություն


| | |
|---|---|
| Որո՞նք են «հատուկ վճարումները» | 1 |
| Ի՞նչն է որակվում որպէս հատուկ վճարում | 2 |
| Ինչպե՞ս են հասույթի սահմանափակումները ազդում նպաստների վրա: | 2 |
| Եթէ կարծում եք որ ստացել եք հատուկ վճարում | 2 |
| Հատուկ վճարումի օրինակ | 2 |
| Ապահովագրական վաճառորդ եւ հողագործներ | 3 |
| Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ | 3 |


## Անցնելուց Յետոյ Պարգեւաբաշխումներ, միջնորդադրամ, արձակուրդի եւ հիվանդության վճարում, ապահովագրական միջնորդադրամ, որոշ հողագործական եկամուտ եւ հատուկ այլ վճարումներ

### Որո՞նք են «հատուկ վճարումները»

Կենսաթոշակի անցնելուց յետոյ դուք կարող եք ստանալ վճարումային աշխատանքի համար, որը դուք կատարել էիք նախքան Սոցիալական Ապահովության նպաստներ ստանալը: Սովորաբար, այս վճարումը չի ազդում ձեր Սոցիալական Ապահովության նպաստիներին: Սույն թերթիկում բացատրվում է հատուկ վճարումների տեսակները, որպէսզի դուք որոշեք թէ արդյոք ստացել եք դրանք, իսկ ստանալու դէպքում՝ ինչ պէտք է անեք:

### Ի՞նչն է որակվում որպէս հատուկ վճարում

Եթէ դուք կենսաթոշակ անցնելուց յետոյ ստացել եք աշխատավարձ այն գործի համար որ ավարտել էիք նախքան ձեր աշխատանքի դադարեցումը, այդ եկամուտը «հատուկ վճարում» կը համարվի: Հատուկ վճարումները ընդգրկում են պարգեւաբաշխումներ, հաւաքված արձակուրդի եւ հիվանդության վճարումներ, վերջնահաշվարկ վճարում, ետին մնացած վճարում, սպասման վճարում, վաճառքի միջնորդադրամ եւ կենսաթոշակի անցնելու հետ կապված վարձեր կամ հետաձգված հատուցում: Այս տեսակի եկամուտը

արձանագրվում է ներկա տարվա ձեր W-2 ձեւաթղթում, սակայն վաստակված էր նախորդ տարում եւ **կարող** է նշվի W-2 ձեւաթղթի «Ոչ Որակյալ Ծրագիր» (Nonqualified Plan) կոչվող մասում:

Եթէ դուք ինքնաշխատ եք եղել եւ ծառայություններ մատուցել նախքան Սոցիալական Ապահովության **կենսաթոշակի անցնելը**, եւ առաջին տարվա ընթացքում ստանում եք զուտ եկամուտ այս աշխատանքի համար, մենք այդ եկամուտը համարում ենք «հատուկ վճարում»: «Ծառայություններ» կոչվում են այն կանոնավոր աշխատանքն ու գործունեությունները որ դուք կատարում եք ձեր ձերնարկության համար:

Ինքնաշխատների համար որոշակի հատուկ վճարումներ ընդգրկում են եկամուտ հողագործական կամ ագարակային աշխատանքից, կամ եկամուտ որ ստանում է մի ձեռնարկության սեփականատէրը արանց աշխատելու կամ ծառայություն ընելու:

## Ինչպե՞ս են հասույթի սահմանափակումները ազդում նպաստների վրա:

Եթե սոցիալական ապահովության կենսաթոշակային նպաստներ ստացող անձը լրիվ կենսաթոշակային տարիքից ավելի երիտասարդ է, ապա առկա են որոշ սահմանափակումներ, թե որքան եկամուտ նա կարող է վաստակել աշխատանքից: Ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը տարբեր է՝ կախված ձեր ծննդյան տարեթվից: Կարող եք այցելել ***www.socialsecurity.gov/planners/retire/ageincrease.html*** կայքը՝ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը պարզելու համար: Նպաստները կրճատվում են, եթե հասույթը գերազանցում է որոշակի սահմանաչափը:

- Եթէ դուք ձեր կենսաթոշակի անցնելու լրիւ տարիքից երիտասարդ եք, ձեր նպաստից $1 դոլար պակսում է ամէն մի $2 դոլարի փոխարեն եթէ ձեր հասույթը $17,040 դոլարից բարձր է 2018 տարվա համար:
- Ձեր կենսաթոշակի անցնելու լրիւ տարիքը հասնելու տարում, ձեր նպաստից $1 դոլար պակսում է ամէն մի $3 դոլարի փոխարէն եթէձեր հասույթը $45,360 դոլարից բարձր է 2018 տարվա համար:
- Սկսյալ ձեր լրիւ կենսաթոշակի անցնելու ամսից, դուք կարող եք վաստակել անսահման հասույթ եւ միաժամանակ ստանալ Սոցիալական Ապահովության ամբողջական նպաստներ:

## Եթէ կարծում եք որ ստացել եք հատուկ վճարում

Եթէ դուք ստանում եք Սոցիալական Ապահովության նպաստներ եւ ձեր ընդհանուր տարեկան հասույթը գերազանցում է մեր սահմանը եւ այդ հասույթը ներառկում է հատուկ վճարում, դուք պէտք է Սոցիալական Ապահովության հետ կապվեք: Հայտնեցե՛ք մեզ որ դուք ստացել եք հատուկ վճարում: Եթէ մենք համաձայնենք, հատուկ վճարումի գումարը այդ տարվա ընդհանուր հասույթից չեղյալ կը նկատենք:

## Հատուկ վճարումի օրինակ

Այս օրինակը ցույց է տալիս Սոցիալական Ապահովության վերաբերումը հատուկ վճարումի:

Պրն. ՏըՍիլվան սկսել է ստանալ Սոցիալական Ապահովության նպաստներ 62 տարեկանում՝ Նոյեմբեր 2017 թվականին: Հունվար 2018 թվականին Պրն.ՏըՍիլվան իր գործատէրից ստացել է $17,000 դոլարի փոխ գիր (չեկ) իր հաւաքած արձակուրդի օրերուն փոխարեն: Որովհետեւ դա հաւաքված էր կենսաթոշակի անցնելուց առաջ, Սոցիալական Ապահովությունը դիտարկելու է այդ որպէս հատուկ վճար եւ չի հաշվելու այն որպէս հասույթ 2018 թվականի համար:

## Ապահովագրական վաճառորդ եւ հողագործներ

Մասնագիտական երկու հատուկ խումբեր, ապահովագրական վաճառորդներ եւ հողագործներ, սովորաբար ստանում են հասույթ որը նկատվում է «հատուկ վճարում»:

### Ապահովագրական վաճարորդ

Շատ ապահովագրական վաճարորդներ կենսաթոշակի անցնելուց յետոյ շարունակում են ստանալ միջնորդադրամ այն ապահովագրերի համար, որոնք նրանք վաճառել են նախքան կենսաթոշակի անցնելը: Այդ եկամուտը չի ազդելու նրանց Սոցիալական Ապահովության նպաստներին:

### Հողագործներ

Շատ հողագործներ հավաքում են բերքը մէկ տարի եւ պահեստավորում են այդ՝ յաջորդ տարի վաճառելու նպատակով: Այդ եկամուտը չի ազդելու նրանց Սոցիալական Ապահովության նպաստներին:

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ

Կան Սոցիալական Ապահովության Ծառայության հետ կապ հաստատելու տարբեր միջոցներ, այդ թվում առցանց, հեռախոսով և անձնապես: Մենք այստեղ ենք՝ Ձեր հարցերին պատասխանելու և Ձեզ սպասարկելու նպատակով: Ավելի քան 80 տարվա ընթացքում, Սոցիալական Ապահովությունը օգնում է ապահովելու այսօրվա և վաղվա օրը՝ միլիոնավոր մարդկանց տրամադրելով նպաստներ և ֆինանսական աջակցություն՝ իրենց կյանքի ճանապարհին:

### Այեցելե՛ք մեր կայքէջը՝

Ցանկացած վայրից և ցանկացած ժամանակ Սոցիալական Ապահովության գործնեություն վարելու ամենհարմար եղանակը դա մեր՝ ***www.socialsecurity.gov*** կայքէջը այցելելն է: Այնտեղ Դուք կարող եք՝

- Ստեղծել *my* Social Security account (իմ Սոցիալական Ապահովություն անձնական էջը)՝ Ձեր *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության հաշվետվությունը*) դիտելու, Ձեր հասույթը հավաստելու, նպաստների հավաստագրության նամակը տպելու, Ձեր ուղղակի փոխանցման (direct deposit) վերաբերյալ տեղեկատվությունը փոխելու, Ձեր Medicare-ի քարտի փոխարինում հայցելու, SSA-1099/1042S փոխարինում ստանալու նպատակով և ավելին;
- Դիմել Extra Help (Օժանդակ օգնության) ծրագրին Medicare-ի դեղատոմսով տրամադրվող դեղորայքի ծրագրով նախատեսված ծախսերի համար/
- Դիմել կենսաթոշակի, հաշմանդամության և Medicare-ի նպաստների համար
- Գտնել մեր հրատարակությունների կրկնօրինակները
- Ստանալ պատասխաններ հաճախ տրվող հարցերին և
- Շատ ավելին

Նշված ծառայություններից որոշները հասանելի են միայն անգլերեն լեզվով: Այցելե՛ք մեր Multilanguage Gateway բաժինը (Բազմալեզու էջը) ՝ Հայերեն լեզվով տեղեկատվություն ստանալու համար: Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություններ, որպեսզի օգնենք Ձեզ վարելու Ձեր Սոցիալական Ապահովության գործնեությունը: Տվյալ թարգմանչական

Securing today and tomorrow

**Social Security Administration**
Publication No. 05-XXXXX-AM | Month 20XX
Հատուկ Վճարումներ Կենսաթոշակի
English pub title (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին:

ծառայությունները հասանելի են անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական Ապահովության գրասենյակ:

## Հեռախոս

Եթե Դուք չունեք համացանցի (Ինտերնետի) հասանելիություն, ապա հեռախոսի միջոցով մենք շատ ավտոմատացված ծառայություններ ենք առաջարկում՝ օրը 24 ժամ շաբաթը 7 օր: Զանգահարեք մեզ մեր անվճար՝ **1-800-772-1213** հեռախոսահամարով կամ մեր TTY (հեռատիպ)՝ **1-800-325-0778** հեռախոսահամարով՝ լսողության հետ խնդիրներ ունենալու դեպքում:

Եթե Դուք աշխատակցի հետ խոսելու կարիք ունեք, ապա մենք կարող ենք պատասխանել Ձեր զանգերին՝ Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Մենք խնդրում ենք Ձեր համբերատարությունը ծանրաբեռնված շրջաններում, քանի որ Դուք կարող եք ունենալ սովորականից ավելի հաճախ ստացվող ծանրաբեռնվածության ազդանշան և ավելի երկար սպասելաժամանակ մեզ հետ խոսելու համար: Մենք ակնկալում ենք սպասարկել Ձեզ:

Securing today and tomorrow

**Social Security Administration**
Publication No. 05-10063-AM | Jan 2018
Հատուկ Վճարումներ Կենսաթոշակի
Special Payments After Retirement (Armenian)
Produced and published at U.S. taxpayer expense
Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին: